# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<<26 >> <<նոյեմբեր>> 2014 թ                N 125
ք. Եղեգնաձոր

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 16 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով.*

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Մ Ե Մ**

*1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի մարտի 13-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 16 կարգադրության մեջ կատարել փոփոխություններ՝*

*1) 2-րդ կետի << ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության վարչության պետ >> բառերը փոխարինել << ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ >> բառերով*

*2) 4-րդ կետի << ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ >> բառերը փոխարինել <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ>> բառերով*

*3) 5-րդ կետի << սոցիալական ապահովության պետական ծառայության Եղեգնաձորի տարածքային բաժնի պետ >> բառերը փոխարինել << աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության Եղեգնաձորի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ>> բառերով*

*4) 6-րդ կետի << ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ-ի և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության պետի տեղակալ>> բառերը փոխարինել << ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ >> բառերով*

*5) 9-րդ կետի <<Գևորգյան Խաչիկ - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /հանձնաժողովի քարտուղար/ >> բառերը փոխարինել <<Ցոլիկ Բաբայան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/>> բառերով*

*2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ